

Վիճակագրական արտադրանք – Մշակույթ (Կենդանաբանական այգի (տարեկան), Համերգային գործունեություն (տարեկան), Կինոարտադրություն (տարեկան), Թատրոնների գործունեություն (տարեկան), Թանգարանների գործունեություն (տարեկան), Գրադարանների գործունեություն (տարեկան), Սպորտային կազմակերպությունների գործունեություն (տարեկան))

| Գործընթացներ | Ենթագործընթացներ | Ենթագործընթացի նկարագրություն |
|-----------------------------|--|---|
| <i>Կարիքների ձևակերպում</i> | | |
| | 1.1 Կարիքների բացահայտում | <p>Մշակույթի ոլորտի վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերում, հաշվի առնելով օգտագործողների պահանջարկը, ընդգրկված են կենդանաբանական այգու, համերգային և կինոարտադրող կազմակերպությունների, թատրոնների, թանգարանների, գրադարանների և սպորտային կազմակերպությունների գործունեության վերաբերյալ ցուցանիշներ: Մշակույթի ոլորտի խմբավորված ցուցանիշները պարբերաբար փոփոխության են ենթարկվում ըստ պահանջարկի և տրամադրվում այս ոլորտում քաղաքականություն մշակող համապատասխան նախարարություններին, գիտական, կրթական հաստատություններին, միջազգային կազմակերպություններին, զանգվածային լրատվամիջոցներին և դրա նկատմամբ պահանջարկ ունեցող այլ սուբյեկտներին՝ պահպանելով դրանց զաղտնիությանը վերագրվող օրենսդրական պահանջները:</p> |
| | 1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում | <p>Մշակույթի ոլորտի վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերում ըստ օգտագործողների պահանջարկի վիճակագրական նոր ցուցանիշների ընդգրկման, առկա ցուցանիշների փոփոխության, տեղեկատվության հավաքման հետ կապված պարզաբանումներ իրականացնելու նպատակով պարբերաբար աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ են անցկացվում Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության հետ: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=131 հղումը):</p> |

| | | |
|-------------------------------------|--|--|
| 1.3 Արտադրանքի նպատակների սահմանում | | Ուսումնասիրվում է ոլորտի վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների փոփոխության վերաբերյալ: Տեղեկատվության (տվյալների) հավաքման, օգտագործման, հրապարակման և պահպանման գործընթացում խստորեն պահպանվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքում վիճակագրական տվյալների գաղտնիությանը վերագրվող դրույթները (տես՝ http://www.armstat.am/file/doc/99486043.pdf հղումը): |
| 1.4 Հասկացությունների որոշում | | Ցուցանիշների ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջարկի առկայությամբ: |
| 1.5 Տվյալների առկայության ստուգում | | Մշակույթի ոլորտի տվյալների հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերի միջոցով՝ տարեկան ու հնգամյա վիճակագրական ծրագրերին համապատասխան: Ցուցանիշների ճշգրտման, դրանցում կատարվող փոփոխությունների արդիականացման համար տեղեկատվության ստացման աղբյուր են հանդիսանում Երևանի քաղաքապետարանից, ՀՀ ԿԳՄՍ նախարարության և մշակութային կազմակերպություններից ստացվող համապատասխան տեղեկատվությունը: |
| 1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում | | Մինչ վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերի ընդունումը ՀՀ ՎՊԽ կողմից և ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրա պետական գրանցումը որպես նորմատիվ իրավական ակտ իրականացվում են դրանում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգի մասով աշխատանքային քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների, մշակութային կազմակերպությունների, օգտագործողների հետ, իսկ հնարավորության դեպքում հաշվի է առնվում նաև միջազգային փորձագետների կարծիքը: |
| <i>Նախագծում</i> | | |
| 2.1 Արդյունքների նախագծում | | Տվյալների հավաքումը հիմնվում է «Պաշտոնական վիճակագրության մասին» (տես՝ https://www.armstat.am/am/?nid=638 հղումը) և «Հնգամյա վիճակագրական ծրագրի մասին» (տես՝ https://www.armstat.am/am/?nid=719 հղումը) ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն (տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=122973 |

| | | |
|--|---|---|
| | | <p>հղումը) և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» (տես՝ https://www.armstat.am/am/?nid=191 հղումը) որոշումների, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի մի շարք որոշումներով հաստատված վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերի և դրանց լրացման հրահանգների վրա:</p> |
| | <p>2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում</p> | <p>Վիճակագրական ցուցանիշների հավաքման համար հաստատվել են վիճակագրական սկզբնական հաշվետվական 7 տարեկան ձևերը:</p> |
| | <p>2.3 Տվյալների հավաքման նախագծում</p> | <p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերի միջոցով: Տեղեկատվության հավաքումն իրականացվում է սկզբնական աղբյուրներից՝ կազմակերպություններից: Վիճակագրական տեղեկատվության հավաքման հիմնական ձևը թղթայինն է՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված վիճակագրական հաշվետվական ձևի միջոցով՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի: Կիրառվում է նաև տեղեկատվության հավաքման էլեկտրոնային եղանակ:</p> |
| | <p>2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում</p> | <p>Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է ոլորտի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով: Իրականացվում է մշակույթի ոլորտի վերաբերյալ տեղեկատվության ստացում՝ բոլոր հնարավոր աղբյուրներից, որին անմիջապես հետևում է այդ կազմակերպությունների իրազեկումը վիճակագրական դիտարկման դաշտ ընդգրկվելու վերաբերյալ, ապա համապատասխան վիճակագրական տեղեկատվության հավաքումը:</p> <p>Ընտրանքի նախագծման անհրաժեշտությունն առկա չէ, քանի որ կազմակերպություններից ստացվող տեղեկատվությունն իրականացվում է համատարած հաշվառմամբ:</p> |
| | <p>2.5 Մշակման և վերլուծության նախագծում</p> | <p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում նաև տեղեկատվություն ներկայացնող համապատասխան կազմակերպության հետ կապ հաստատելու միջոցով, իրականացվում են համապատասխան ճշգրտումներ: Ցուցանիշների վերաբերյալ ոչ արժանահավատ, թերի կամ աղավաղումներով տեղեկատվության ներկայացման դեպքում համաձայն ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի» 169.2 հոդվածի պահանջների ըստ անհրաժեշտության</p> |

| | | |
|--|--|---|
| | | իրականացվում է նաև ստուգման գործընթաց, որի արդյունքում ճշգրտման են ենթարկվում ցուցանիշների վերաբերյալ նախորդող ժամանակաշրջանի տվյալները: |
| | 2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում | Վիճակագրական տեղեկատվության հավաքումից մինչև դրանց հրապարակումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված ռեսպոնդենտներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ: |
| | <i>Կառուցում</i> | |
| | 3.1 Հավաքման գործիքի կառուցում | Տեղեկատվության հավաքման իրականացման և դրա համար անհրաժեշտ վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերի և դրանց լրացման հրահանգների հասանելիության ապահովման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ (տես՝ https://www.armstat.am/am/?nid=547 հղումը): |
| | 3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում | Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային փաթեթում (Microsoft Office Access) առկա է մուտքագրված տվյալների թվաքանակն ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ հանրագումարների, տրամաբանական կապերի, կազմակերպությունների գրանցման, նույնականացման, պետական ռեգիստրի ու հարկ վճարողի հաշվառման համարների համապատասխանության և այլ ավտոմատ ստուգումների համակարգեր: |
| | 3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում | Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի (պահպանելով վիճակագրական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին վերագրվող սահմանափակումները): |
| | 3.4 Գործընթացների կարգավորում | Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝ <ol style="list-style-type: none"> 1. տեղեկատվության հավաքում, 2. թվաքանակն և տրամաբանական ստուգումներ և ճշգրտումներ, 3. տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային մուտքագրման ծրագրի միջոցով, 4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում |

| | | |
|--|---|---|
| | | <p>համապատասխան դինամիկ շարքերի հետ,</p> <p>5. տեղեկատվության տարածում՝ ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով տարեգրքերում, տեղեկատվական զեկույցներում, վիճակագրական ժողովածուներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:</p> |
| | 3.5 Արտադրության համակարգի փորձարկում | Պայմանավորված վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերում ցուցանիշների փոփոխությունների հետ մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթը պարբերաբար ենթարկվում է համապատասխան փոփոխությունների: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև ծրագրային ապահովման միջոցների թեստավորում: |
| | 3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում | Վիճակագրական նոր ցուցանիշի վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերում ընդգրկմանը զուգահեռ իրականացվում է վիճակագրական տեղեկատվություն տրամադրողի (ռեսպոնդենտի)՝ ցուցանիշի ընկալման փորձարկում: Իրականացվում են համապատասխան փոփոխություններ դրանց լրացման հրահանգներում և մեթոդական ցուցումներում: |
| | 3.7 Արտադրության համակարգի վերջնականացում | Իրականացվում են վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների մշակում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողին (ռեսպոնդենտին): Ամփոփվում են տեղեկատվություն ներկայացնողների հետ ցուցանիշների վերաբերյալ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունները: |
| | <i>Հավաքում</i> | |
| | 4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում | Տեղեկատվության հավաքման համատարած դիտարկման արդյունքում ձևավորվում է տեղեկատվության գլխավոր համակցությունը, որն իր մեջ ներառում է բոլոր կազմակերպություններից հավաքված ամբողջական վիճակագրական տեղեկատվությունը: |
| | 4.2 Հավաքման կազմակերպում | Վիճակագրական տեղեկատվության հավաքման կազմակերպման համար իրականացվում է դիտարկման ենթակա նախապես հայտնի կազմակերպությունների քանակին համապատասխան վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերի և ըստ անհրաժեշտության դրանց լրացման հրահանգների տպագրության պատվերի ձևավորում, դրանց տպագրություն և բաշխում համապատասխան կազմակերպությանը: Միաժամանակ վիճակագրական սկզբնական հաշվետվական ձևերն ու դրանց լրացման |

| | | |
|--|------------------------------|---|
| | | <p>հրահանգները հասանելի են նաև Արմստատի պաշտոնական կայքում (տես՝ http://www.armstat.am/am/?nid=67 հղումը): Առկա են էլեկտրոնային եղանակով հաշվետվության հավաքման համար անհրաժեշտ ցանցային միջոցներ:</p> |
| | 4.3 Հավաքման իրականացում | <p>Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ինչպես Արմստատի տարածքային ստորաբաժանումների, մարզային վարչությունների, այնպես էլ Արմստատի կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման միջոցով՝ առձեռն, փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով համաձայն 20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման (տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=122973 հղումը):</p> |
| | 4.4 Հավաքման վերջնականացում | <p>Հավաքված տեղեկատվությունը թվաքանական և տրամաբանական ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ տեղեկատվությունն էլեկտրոնային միջավայր անմիջապես ներածելու եղանակով: Թղթային և էլեկտրոնային եղանակով ստացվող հաշվետվություններն էլեկտրոնային միջավայր ներմուծելուց հետո ենթարկվում են արխիվացման՝ միաժամանակ պահպանելով դրանց գաղտնիությանը վերագրվող օրենսդրական պահանջները:</p> |
| | <i>Մշակում</i> | |
| | 5.1 Տվյալների ինտեգրում | <p>Իրականացվում է Արմստատի մարզային վարչություններից ստացվող համապատասխան տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, ինչպես նաև Արմստատ հավաքվող տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որոնց արդյունքում բացառվում են կրկնությունները:</p> |
| | 5.2 Դասակարգում և կողավորում | - |
| | 5.3 Վերանայում և հաստատում | <p>Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ կողավորված տեղեկատվության համապատասխանեցում գործող դասակարգիչների պահանջներին: Ըստ անհրաժեշտության իրականացվում է նաև կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման, նույնականացման համապատասխան կողերի վավերացում:</p> |
| | 5.4 Խմբագրում և իմպուտացիա | - |

| | | |
|-----------------------|--|---|
| | 5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում | Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա են: |
| | 5.6 Կշիռների հաշվարկում | Քանի որ տեղեկատվությունն ապահովում է այդ ոլորտի վիճակագրության ամբողջականությունը, հետևաբար լրացուցիչ կշիռների հաշվարկման անհրաժեշտություն առաջանում է: |
| | 5.7 Ագրեգատների հաշվարկում | Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ էլքային տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով: |
| | 5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում | - |
| <i>Վերլուծություն</i> | | |
| | 6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում | <p>Ստացված ամփոփ տեղեկատվության հիման վրա իրականացվում են վիճակագրական ցուցանիշների խմբավորումներ, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում: Մասնավորապես հաշվարկվում են մշակույթի ոլորտի հետևյալ հիմնական ցուցանիշները՝</p> <ul style="list-style-type: none"> • կենդանաբանական այգում ցուցադրման ենթակա կենդանիների տեսակային կազմը, քանակն ու շարժը, մեկ կենդանուն բաժին ընկած կառույցների մակերեսը, այցելուների թվաքանակն ու էքսկուրսիաների քանակը; • համերգային կազմակերպությունների քանակը, հանարապետությունում և դրանից դուրս կազմակերպված համերգների քանակը, հանդիսատեսների թվաքանակը; • ավարտված, անավարտ ֆիլմերի քանակն ըստ տեսակի ու դրանց համար ֆինանսական միջոցների օգտագործումը; • թատերահանդիսային կազմակերպությունների քանակն ըստ ենթակայության, ներկայացումների քանակը; • թանգարանների քանակը ըստ բնույթի, թանգարանների ֆոնդերի, այցելուների ու աշխատողների թվաքանակը; • գրադարանների քանակը, գրքային ֆոնդն ու ընթերցողների թվաքանակը; • սպորտային կազմակերպությունների քանակը, ըստ օլիմպիական և ոչ օլիմպիական մարզաձևերի՝ մարզիչ-մանկավարժների ու մարզիկների թվաքանակը: <p>Ցուցանիշները ներկայացվում են ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի: Ստացված ցուցանիշների հաշվարկն օգտագործվում է ցուցանիշների դինամիկ շարքերի</p> |

| | | |
|--|--|---|
| | | կառուցման համար: |
| | 6.2 Արդյունքների վավերացում | Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և վիճակագրական հաշվետվական ձևերի լրացման հրահանգների: |
| | 6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում | Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով նախորդ տարիների վերաբերյալ համապատասխան ցուցանիշների դինամիկան: |
| | 6.4 Բացահայտման հսկողության կիրառում | Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ http://www.armstat.am/file/doc/99454478.pdf հղումը): |
| | 6.5 Արդյունքների վերջնականացում | Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումն իրականացվում է ոլորտի վերաբերյալ ամփոփ ցուցանիշների վերլուծություն՝ ըստ դրանց դինամիկ շարքերի: |
| | <i>Տարածում</i> | |
| | 7.1 Ելքային համակարգերի արդիականացում | Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում և վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում: |
| | 7.2 Տարածման արտադրանքների արտադրում | Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների, քարտեզների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի, վիճակագրական ժողովածուների և տեղեկատվական ամսական զեկույցների միջոցով. 1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք (տես՝ |

| | | |
|--|---|---|
| | | <p>https://www.armstat.am/am/?nid=586 հղումը):</p> <p>2. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (տես՝ https://www.armstat.am/am/?nid=80&id=2203 հղումը):</p> <p>3. Հայաստանը թվերով (տարեկան) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=80&id=2219 հղումը):</p> <p>4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (ամսական) (տես՝ https://www.armstat.am/am/?nid=82 հղումը):</p> <p>5. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը (տարեկան) (տես՝ http://www.armstat.am/am/?nid=82&id=1689 հղումը):</p> <p>6. Հայաստանի կանայք և տղամարդիկ (տարեկան) (տես՝ http://www.armstat.am/am/?nid=82&id=1487 հղումը):</p> |
| | 7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում | Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները: |
| | 7.4 Տարածման արտադրանքների խթանում | Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում: |
| | 7.5 Օգտագործողների աջակցության կառավարում | Վիճակագրական չհրապարակված ցուցանիշների համար օգտագործողների կողմից պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը: |
| | <i>Գնահատում</i> | |
| | 8.1 Գնահատման միջոցների հավաքում | - |
| | 8.2 Գնահատման իրականացում | - |
| | 8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում | - |

